ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/4» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստ

ք. Երևան 07 դեկտեմբերի 2018թ. Ժամը 15:05

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ. Արչունց

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Թ. Զաքարյան Շ. Հարությունյան, Ա. Իսկանդարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Բաղդասարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթի (Դիմում-հայտարարություն) առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
5. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
6. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

2. էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

2.1 էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտերը ներկայացվել են էլեկտրոնային ձևով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով՝ մինչև դեկտեմբերի 05-ը, ժամը 14:30-ն: Էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է դեկտեմբերի 07-ին, ժամը 14:30-ին: Սահմանված ժամկետում «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի առաջին չափաբաժնին հայտ են ներկայացրել «Յուքոմ» ՍՊԸ և «ՋԻԹԵԼ» ՍՊԸ մասնակիցները, իսկ երկրորդ չափաբաժնին՝ «Յուքոմ» ՍՊԸ մասնակիցը:

3.Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթի (Դիմում-հայտարարություն) առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 «Յուքոմ» ՍՊԸ և «ՋԻԹԵԼ» ՍՊԸ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթուղթը՝ Դիմում-հայտարարություն, որը կազմվել և ներկայացվել է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

4.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին

4.1 ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից հայտարարված Հանրային և բջջային հեռախոսակապի ծառայությունների գնման ընթացակարգը բաղկացած է 2 չափաբաժնից: Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները՝

N	Մասնակիցներ	Նախահաշվային գին	ԳՆԱՌԱՋԱՐԿՆԵՐ			ՀՀ դրամ		
			Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
Հանրային հեռախոսակապի ծառայություն								
1	«Յուքոմ» ՍՊԸ	**240 000**	200 000	40 000	240 000	200 000	40 000	240 000
2	«ՋԻԹԵԼ» ՍՊԸ	**240 000**	200 000	40 000	240 000	200 000	40 000	240 000
Բջջային հեռախոսակապի ծառայություն								
1	«Յուքոմ» ՍՊԸ	**18 000**	15 000	3 000	18 000	15 000	3 000	18 000

5. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

5.1 Առաջին չափաբաժնի մասով հակադարձ աճուրդում տեղի է ունեցել մինիմալ գնի կրկնություն, որի արդյունքում eauction.armeps.am համակարգը մերժել է մասնակիցների հայտերը: Առաջին չափաբաժինը հայտարարվում է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն:

5.2 Երկրորդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Յուքոմ» ՍՊԸ մասնակիցը՝ որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով:

5.3 Էլեկտրոնային եղանակով ՀՀ Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել երկրորդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

5.4 էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել երկրորդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

6.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

6.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 5.3 և 5.4 կետերով նախատեսված փաստաթղթերի՝ օրենքով սահմանված կարգով ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ _____ Հ. Արչունց

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝

_____ Թ. Զաքարյան

_____ Շ. Հարությունյան

_____ Ա. Իսկանդարյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ. Բաղդասարյան